ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Համագործակցության մասին

02.03.2026

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետև՝ Հուշագիր) կնքվում է Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամի, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ի և ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի (ԴՄ) միջև (այսուհետև՝ Կողմեր):

Նկատի ունենալով, որ Կողմերը շահագրգռված են Հայաստանի մեդիա դաշտի բարեվարքության և լրագրողական էթիկայի սկզբունքների պահպանման ուղղությամբ սերտ համագործակցությամբ, կարևորում են այդ ոլորտում քաղաքացիական հասարակության ներուժի և լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների համադրումը, գիտակցում են առցանց տիրույթում ատելության խոսքի և վիրավորանքի տարածման մարտահրավերներին դիմակայելու հրատապությունը և այդ ուղղությամբ համատեղ ջանքերի գործադրման անհրաժեշտությունը,

Կարևորելով, որ Կողմերը կիսում են հանրային համերաշխության, բազմակարծության և առցանց տիրույթում բռնությունից զերծ միջավայրի ձևավորման տեսլականը և հանրային առցանց տիրույթում երկխոսությունների էթիկական կարգավորման նպատակով ցանկանում են համագործակցել մոդերացիոն քաղաքականությունների մշակման ու կիրառման ոլորտում,

Հաշվի առնելով, որ թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց աճում են ոցիալական մեդիայում ատելության խոսք պարունակող մեկնաբանությունների (վիրավորանք, նվաստացում, բռնության կոչ, հայհոյանք, ապամարդկայնացում, կարծրատիպավորում և այլն), ապատեղեկատվության և հատկապես կանանց ու խոցելի խմբերի նկատմամբ թիրախավորման ռիսկերը, ինչը պահանջում է նորարարական, համակարգված և բազմակողմանի լուծումներ,

Գիտակցելով, որ մոդերացիայի հստակ ընթացակարգերի, թվային գործիքակազմի (այդ

MEMORANDUM OF UNDERSTANDING

On Cooperation

02.03.2026

This Memorandum of Understanding (hereinafter referred to as the "Memorandum") is concluded between the "All for Equal Rights" Foundation, the "Media Diversity Institute" non-governmental organization and the Media Ethics Observatory (MEO) (hereinafter referred to as the "Parties".

Considering that the Parties are interested in close cooperation towards the preservation of integrity and principles of journalistic ethics in the Armenian media field, emphasize the combination of civil society potential and media self-regulation mechanisms in that area, realize the urgency of facing the challenges of the spread of hate speech and insults in the online domain and the necessity of exerting joint efforts in that direction,

Emphasizing that the Parties share a vision of public solidarity, pluralism, and the formation of a violence-free environment in the online domain, and for the purpose of ethical regulation of dialogues in the public online domain, wish to cooperate in the field of development and application of moderation policies,

Considering that in parallel with the development of digital technologies, the risks of comments on social media containing hate speech (insults, humiliation, calls to violence, profanity, dehumanization, stereotyping, etc.), disinformation, and particularly the targeting of women and vulnerable groups are increasing, which requires innovative, coordinated, and comprehensive solutions,

Realizing that the introduction of clear moderation procedures, digital toolsets (including AI solutions),

թվում՝ AI լուծումների) և էթիկական ուղեցույցների ներդրումն էապես կնպաստի լրատվամիջոցների հաշվետվողականության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքացիների՝ արժանապատիվ և անվտանգ հաղորդակցվելու իրավունքի պաշտպանությանը,

Կողմերը եկան հետևյալ համաձայնության.

Հոդված 1. Նպատակը

Սույն Հուշագրի նպատակն է աջակցել ՁԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության անդամներին ատելության խոսքի կանխարգելման և թվային դիմակայունության բարձրացման գործում՝ մեկնաբանությունների մոդերացիայի խմբագրական քաղաքականության և արհեստական բանականության (ԱԲ) գործիքի ներդրման, անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացման և կիրառվող տեխնոլոգիաների անվտանգության ու թափանցիկության ապահովման միջոցով:

Հոդված 2. Համագործակցության ոլորտներ

Կողմերը համաձայնում են համագործակցել գործունեության հետևյալ ոլորտներում՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ.

2.1 ՁԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության անդամներին անվճար և առաջնահերթ խորհրդատվության տրամադրում, վերապատրաստումների կազմակերպում ԱԲ-ով օժտված moderAItor գործիքի կիրառման, մեկնաբանությունների մոդերացիայի խմբագրական քաղաքականության ներդրման վերաբերյալ,

2.2 Մեկնաբանությունների մոդերացիայի խմբագրական քաղաքականության համապարփակ փաստաթղթի և moderAItor գործիքի կիրառման ուղեցույցի տրամադրում,

2.3 Մեդիա կազմակերպությունների համար այս գործընթացում կարողությունների զարգացման դասընթացների կազմակերպում,

2.4 Լրատվամիջոցների հետ moderAItor գործիքի փորձարկում, իսկ փորձարկումից հետո գործիքի բաժանորդագրության մոդելի ակտիվորեն խթանում մեդիա ինքնակարգավորման նախաձեռնության անդամների շրջանում,

2.5 մեդիա ինքնակարգավորման նախաձեռնության անդամ կազմակերպությունների համար գործիքից

and ethical guidelines will significantly contribute to increasing the accountability of the media, as well as to the protection of citizens' rights to dignified and safe communication,

The Parties have reached the following agreement:

Article 1. Purpose

The purpose of this Memorandum is to support the members of the media self-regulation initiative in preventing hate speech and strengthening digital resilience through the implementation of an editorial policy on comment moderation and an Artificial Intelligence (AI) tool, the development of staff professional capacities, and the assurance of the security and transparency of the technologies applied.

Article 2. Areas of Cooperation

The Parties agree to cooperate in the following areas of activity, applying their capabilities, resources, and experience:

2.1 Providing free and priority consultancy to the members of the media self-regulation initiative, organizing training sessions on the application of the AI-powered moderAItor tool and the implementation of editorial policies for comment moderation,

2.2 Providing a comprehensive document on the editorial policy for comment moderation and a user guide for the application of the moderAItor tool.

2.3 Organizing capacity-building training courses for media organizations in this process,

2.4 Testing the moderAItor tool with the media, and actively promoting the subscription model of the tool among the members of the media self-regulation initiative after the testing phase,

2.5 Providing the opportunity for free use of the tool and/or ensuring minimum subscription terms for the member organizations of the media self-regulation

անվճար օգտվելու հնարավորություն և/կամ նվազագույն բաժանորդագրային պայմանների ապահովում,

2.6 Ֆոնդհայթայթման համատեղ նախաձեռնությունների իրականացում՝ moderAItor գործիքի երկարաժամկետ աշխատանքի, մեդիա կազմակերպություններին դրա անվճար կամ մատչելի ծառայությունների տրամադրման և ֆունկցիոնալ հնարավորությունները զարգացնելու նպատակով,

2.7 ՁԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության անդամների հետ moderAItor գործիքի օգտագործմանն առնչվող հարցերով հետադարձ կապի ապահովում,

2.8 Քաղաքականության կիրառման թափանցիկության ապահովում moderAItor գործիքի տարեկան աուդիտի անցկացման և ԴՄ-ին դրա արդյունքների ներկայացման միջոցով:

initiative,

2.6 Implementation of joint fundraising initiatives for the purpose of the long-term operation of the moderAItor tool, the provision of its free or affordable services to media organizations, and the development of its functional capabilities,

2.7 Ensuring feedback with the members of the media self-regulation initiative on issues related to the use of the moderAItor tool,

2.8 Ensuring transparency in the implementation of the policy through the annual audit of the moderAItor tool and the submission of its results to the MEO.

Հոդված 3.Խորհրդակցում և տեղեկությունների փոխանակում

3.1 Կողմերը պատրաստակամություն են հայտնում պարբերաբար տեղեկություններ փոխանակել moderAItor գործիքի կիրառման, նոր մարտահրավերների և դրանց հաղթահարման եղանակների վերաբերյալ:

3.2 Այս հոդվածով նախատեսված դեպքերում տեղեկությունների ու փաստաթղթերի փոխանակումը պետք է կատարվի առանց վնասելու այնպիսի ընթացակարգերը, որոնք կարող են ենթադրել գաղտնիություն և հասանելիության սահմանափակումներ:

3.3 Կողմերը համաձայնում են չհրապարակել որևէ տեղեկություն, որն իրենց տրամադրվել կամ հայտնի է դարձել սույն համագործակցության շրջանակում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկությունը հասանելի է հանրությանը, կամ երբ առկա է հրապարակման վերաբերյալ Կողմերի համաձայնությունը:

3.4 Կողմերը հանդիպում են ըստ անհրաժեշտության՝ սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արդյունքները գնահատելու և հետագա գործողությունները ծրագրելու նպատակով:

3.5 Սույն Հուշագրի արդյունավետ իրականացման համար Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է պատասխանատուներ:

Article 3. Consultation and Information Exchange

3.1 The Parties express their willingness to regularly exchange information regarding the application of the moderAItor tool, emerging challenges, and the methods for overcoming them.

3.2 In cases provided for by this article, consultation and exchange of information and documents must be carried out without violating procedures that may require ensuring confidentiality and limited access to certain information and documents.

3.3 The Parties agree not to publish any information that has been provided to them or has become known to them within the framework of this Memorandum, except in cases where such information is publicly available or where there is written consent of the Parties regarding publication.

3.4 The Parties meet as necessary to evaluate the results of work carried out within the framework of this Memorandum and to plan further work.

3.5 Each of the Parties appoints persons responsible for the effective implementation of this Memorandum.

Հոդված 4.Հուշագրի իրականացումը

Սույն Հուշագրով Կողմերը որևէ ֆինանսական պարտավորություն չեն կրում, սակայն ներդնում են համատեղ ջանքեր՝ Հուշագրի նպատակների իրականացման համար:

Article 4. Implementation of the Memorandum

Under this Memorandum, the Parties do not bear any financial obligations but exert joint efforts for the implementation of the purposes of the Memorandum.

Հոդված 5. Անվանման և խորհրդանիշի օգտագործումը

Կողմերից որևէ մեկը առանց նախնական գրավոր համաձայնության չի կարող օգտագործել մյուսի անվանումը, տարբերանշանները կամ ապրանքանիշները:

Article 5. Use of Name and Symbol

Neither Party may use the other Party's name, logos, or trademarks without prior written consent.

Հոդված 6. Տևողությունը, դադարեցումը, փոփոխումը

Հուշագիրը գործում է անորոշ ժամկետով: Հուշագրի ցանկացած փոփոխություն հնարավոր է՝ բոլոր Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Անկախ Հուշագրի անորոշ ժամկետի հանգամանքից, moderAItor գործիքի անվճար և/կամ մատչելի եղանակով աջակցությունը ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության անդամներին կարող է ժամանակավոր կամ անորոշ ժամկետով դադարեցվել, եթե ԲՀՀԻ հիմնադրամը չունենա ծրագրային աջակցություն դոնորներից, սահմանափակված լինի մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով: Հուշագրի Կողմերից մեկը կարող է դադարեցնել իր անդամակցությունը գրավոր ծանուցմամբ:

Article 6. Duration, Termination, Amendment

The Memorandum shall remain in effect for an indefinite period. Any amendment to the Memorandum is possible by the mutual written consent of all Parties. Regardless of the indefinite term of the Memorandum, the support of the moderAItor tool through free and/or affordable means to the members of the media self-regulation initiative may be suspended temporarily or indefinitely if the "All for Equal Rights" Foundation lacks programmatic support from donors or is limited by human, technical, and financial resources. Any of the Parties to the Memorandum may terminate its participation by written notice.

Հոդված 7. Ծանուցումը և հասցեները

Սույն Հուշագրի շրջանակում Կողմերի միջև ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդակցություն կատարվում է գրավոր՝ առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Article 7. Notification and Addresses

Any notification or other communication between the Parties under this Memorandum shall be made in writing, by hand, by mail, or by email address.

Հոդված 8. Ուժի մեջ մտնելը

8.1 Սույն հուշագիրը կնքվում է «Կանանց դեմ ուղղված ատելության խոսքի հայտնաբերում և հակազդում Հայաստանում» ծրագրի շրջանակում, որն իրականացնում է «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամը՝ «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ» ՀԿ-ի CyberHUB-AM նախաձեռնության հետ համագործակցությամբ:

8.2 Սույն Հուշագիրը յուրաքանչյուր Կողմ վավերացնում է էլեկտրոնային ստորագրությամբ,

Article 8. Entry into Force

8.1 This Memorandum is entered into within the framework of the "Detecting and Countering Hate Speech Targeting Women in Armenia" project, which is implemented by the "All for Equal Rights" Foundation in cooperation with the CyberHUB-AM initiative of the "Media Diversity Institute" NGO.

8.2 Each Party shall ratify this Memorandum with

որը ճանաչվում է որպես բնօրինակ:

an electronic signature, which shall be recognized as an original.

Հոդված 9. Կողմերի վավերապայմաններ

«Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամ

Հասցե՝ ՀՀ, Գյումրի, Ալեք Մանուկյան 1շ.
Էլ.փոստ՝ info@allrights.am
ՀՎՀՀ՝ 05547102

Aleksandr Martirosyan
Aleksandr Martirosyan (Mar 2, 2026 16:36:49 GMT+4)

Ստորագրություն Կ.Տ.

Տնօրեն՝
Ալեքսանդր Մարտիրոսյան

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ

Հասցե՝ ՀՀ, Երևան, Զաքյան 5/1
Էլ.փոստ՝ info@mdi.am
ՀՎՀՀ՝ 02582084

Alina Grigoryan
Alina Grigoryan (Mar 2, 2026 17:37:53 GMT+4)

ստորագրություն, Կ.Տ.

Նախագահ՝
Ալինա Գրիգորյան

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին

Հասցե՝ ՀՀ, Երևան, Ղազար Փարպեցի 9Բ
Էլ.փոստ՝ meo@ypc.am

Boris Navasardian
Boris Navasardian (Mar 2, 2026 17:06:17 GMT+4)

ստորագրություն, Կ.Տ.

Նախագահ՝
Բորիս Նավասարդյան

Article 9. Details of the Parties

“All for Equal Rights” Foundation

Address: Alek Manukyan 1, Gyumri, RA
E-Mail: info@allrights.am
TIN: 05547102

Aleksandr Martirosyan
Aleksandr Martirosyan (Mar 2, 2026 16:36:49 GMT+4)

signature, S.P.

Director
Aleksandr Martirosyan

«Media Diversity Institute» NGO

Address: Zaqyan 5/1,Yerevan,RA
E-Mail: info@mdi.am
TIN: 02582084

Alina Grigoryan
Alina Grigoryan (Mar 2, 2026 17:37:53 GMT+4)

signature, S.P.

President
Alina Grigoryan

Media Ethics Observatory

Address: Ghazar Parpetsi 9B, Yerevan, RA
E-Mail: meo@ypc.am

Boris Navasardian
Boris Navasardian (Mar 2, 2026 17:06:17 GMT+4)

signature, S.P.

Chairman
Boris Navasardian

MoU_ARF_MDI_MEO-Hate_Speech_Moderation

Final Audit Report 2026-03-02

Created:	2026-03-02
By:	Aleksandr Martirosyan (alex@cyberhub.am)
Status:	Signed
Transaction ID:	CBJCHBCAABAALpw_X5CgkjV8xfih7SJ1n7ouf7NPMwd1

"MoU_ARF_MDI_MEO-Hate_Speech_Moderation" History

Document created by Aleksandr Martirosyan (alex@cyberhub.am)
2026-03-02 - 12:35:26 PM GMT

Document emailed to Aleksandr Martirosyan (amartirosyan@allrights.am) for signature
2026-03-02 - 12:35:30 PM GMT

Document emailed to Alina Grigoryan (alina@mdi.am) for signature
2026-03-02 - 12:35:31 PM GMT

Document emailed to Boris Navasardian (boris@ypc.am) for signature
2026-03-02 - 12:35:31 PM GMT

Email viewed by Aleksandr Martirosyan (amartirosyan@allrights.am)
2026-03-02 - 12:36:24 PM GMT

Document e-signed by Aleksandr Martirosyan (amartirosyan@allrights.am)
Signature Date: 2026-03-02 - 12:36:49 PM GMT - Time Source: server

Email viewed by Boris Navasardian (boris@ypc.am)
2026-03-02 - 1:05:35 PM GMT

Document e-signed by Boris Navasardian (boris@ypc.am)
Signature Date: 2026-03-02 - 1:06:17 PM GMT - Time Source: server

Email viewed by Alina Grigoryan (alina@mdi.am)
2026-03-02 - 1:37:36 PM GMT

Document e-signed by Alina Grigoryan (alina@mdi.am)
Signature Date: 2026-03-02 - 1:37:53 PM GMT - Time Source: server

Adobe Acrobat Sign

Agreement completed.

2026-03-02 - 1:37:53 PM GMT

Adobe Acrobat Sign